Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 164 - Ա
որոշման

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Նպաստել Հայաստանում ներառական և որակյալ կրթական համակարգերի կայուն ամրապնդմանը՝ կրթական բարեփոխումների շրջանակներում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	1) Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարություն (Գերմանիա, քաղաք Բեռլին 10963, Ստրեսեմանշտրասե 94). 2) Կարիտաս Գերմանիա (Գերմանիա, քաղաք Ֆրայբուրգ, Կարլշտրասե 40)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն (քաղաք Գյումրի, Հ. Սարգսյան փողոց, 3-րդ նրբանցք, տուն 8, ՀՎՀՀ՝ 05514397)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ՝ քաղաք Գյումրի և Մարալիկ, Արթիկ, Աշոցք բնակավայրեր, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ՝ քաղաք Արտաշատ, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ՝ քաղաք Վանաձոր, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ՝ քաղաք Գավառ: Բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	605,801.40 եվրոյին համարժեք դրամ
7.	Բարեգործություն ստացողը	1) 7 դպրոց (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ՝ Գյումրու N 8 միջնակարգ, Գյումրու N 28 հիմնական, Գյումրու N 29 հիմնական, Գյումրու N 11 հիմնական, Մարալիկի N 2 միջնակարգ, Արթիկի N 2 հիմնական, Աշոցքի միջնակարգ դպրոցների 3,559 աշակերտ և 437 աշխատակից). 2) 6 մանկապարտեզ (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ՝ Գյումրու

		«Երազանք», «Ծիածան», «Լուս աստղիկ», «Մարալիկի Ռոմի Բարոնյանի անվան», Արթիկի N 2 և Աշոցքի մանկապարտեզների 640 երեխա և 147 աշխատակից). 3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում բնակվող 180 հաշմանդամություն ունեցող երեխա. 4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում բնակվող 70 հաշմանդամություն ունեցող երեխայի ծնող և 50 ծնող ծնողական խորհուրդներից. 5) Հայաստանի Հանրապետության Շիրակի միջին մասնագիտական հաստատություն (250 ուսանող և 25 դասախոս). 6) Գյումրու, Վանաձորի, Գավառի և Արտաշատի ցերեկային խնամքի կենտրոնների 309 երեխա և 46 աշխատակից. 7) 120 համագաղափարակիր ուսանող:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի մարտի 23-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) ծրագրում ընդգրկված հաստատությունների անձնակազմի և շահագրգիռ կողմերի (երեխաների ծնողներ, աշակերտական խորհուրդներ, աշակերտներ, համագաղափարակիր ուսանողներ) համար «Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների ինքնաաջակցման խմբերի կարողությունների զարգացում» դասընթացների կազմակերպում՝ սեմինար - վարժանքների, քննարկումների և փորձի փոխանակման միջոցով - 532,433.93 եվրոյին համարժեք դրամ. 2) հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների, ուսանողների, դպրոցների ուսուցիչների և տնօրենների տարածաշրջանային և օտարերկրյա հանդիպումներին, փոխանակման այցերին ու համաժողովներին մասնակցության ապահովում - 58,054.78 եվրոյին համարժեք դրամ. 3) դպրոցների, մանկապարտեզների, միջին մասնագիտական հաստատության և ցերեկային խնամքի կենտրոնների սենյակների և դասասենյակների համար կահույքի ձեռքբերում ու տեխնիկական հագեցվածության և հասանելիության ապահովում - 5,714.29 եվրոյին համարժեք դրամ.

		4) իրազեկման բարձրացմանն ուղղված նյութերի (ձեռնարկներ, բուկլետներ և պաստառներ) տպագրություն, մեդիա արշավների կազմակերպում - 9,598.40 եվրոյին համարժեք դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) դռների լայնացման և թեքահարթակների կառուցման ծառայությունների, տեխնիկայի, դիդակտիկ պարագաների ու հարմարեցված գործիքների ձեռքբերում - 5,714.29 եվրոյին համարժեք դրամ. 2) նյութերի տպագրության և մեդիա արշավների կազմակերպմանն ուղղված ծառայությունների ձեռքբերում - 9,598.40 եվրոյին համարժեք դրամ. 3) շահագործվող ավտոմեքենայի վառելանյութի և պահեստամասերի, տարածքի վարձակալության, գրասենյակային պարագաների և գրասենյակային ծառայությունների ձեռքբերում – 44,670.63 եվրոյին համարժեք դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1) աշխատավարձ - 107,944.49 եվրոյին համարժեք դրամ. 2) գրասենյակային տարածքի վարձակալություն - 12,014.29 եվրոյին համարժեք դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի և Գյումրու համայնքապետարանի աշխատակազմների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին: 2) ծրագրի իրականացման վերահսկողությունը կրելու է պարբերական բնույթ և կատարվելու է Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության, Կարիտաս Գերմանիայի կազմակերպության և «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության Վարչական Խորհրդի կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

25.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ